ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի N 737-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2021 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի N 737-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» N 737-Ն որոշման N 1 հավելվածի «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ» բաժնում՝

- 21-րդ կետից հանել «, բժիշկ-փորձագետ» և «(էրգոթերապևտ)» բառերը.
- 21-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 21.1., 21.2. և 21.3 կետերով.«

21.1. բժիշկ-փորձագետ՝ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտի
21.2. անձի ֆունկցիոնալությունը գնահատող մասնագետ
21.3 Անձի ֆունկցիոնալության գնահատման ամփոփագիր մշակող բժիշկ-մասնագետ

».

- 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «

24.2 Միջավայրային գործոնները գնահատող մասնագետ

»:

2. Սահմանել, որ՝

1) սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված 21.1. կետի գործողությունը տարածվում է 2022 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2023 թվականի նոյեմբերի 30-ը ներառյալ ծագած հարաբերությունների վրա.

2) սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի 21.1. տողով սահմանված պաշտոնային դրույքաչափի համար 2023 թվականի հունվարի 1-ից մինչև նոյեմբերի
30-ը ներառյալ գործում է 21.2. կետով սահմանված գործակիցը։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով լրացվող 21.2., 21.3. կետերի և սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի, որոնք ուժի մեջ են մտնում 2023 թվականի փետրվարի 1-ից։